ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-398-26.11.2013-ՖՎ-010/0) վերաբերյալ:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով պետական տուրք գանձող մարմինների և տարեկան պետական տուրք վճարողների համար պետական տուրքը սահմանված ժամկետներում չգանձելու և սահմանված ժամկետներում չվճարելու համար նախատեսված տույժի դրույքաչափը՝ օրական 0.5 տոկոսի չափով, նվազեցնել և սահմանել օրական 0.15 տոկոսի չափով: Զուգահեռաբար, նախագծով առաջարկվում է տույժերի հաշվարկը սահմանափակել 365 օրով (գործող օրենքով տույժերը հաշվարկվում են այնքան ժամանակ, քանի դեռ տուրքի գումարը չի վճարվել):

Այդ կապակցությամբ, հայտնում ենք, որ.

1. Տարեկան պետական տուրք վճարողների համար պետական տուրքը սահմանված ժամկետներում չվճարելու համար նախատեսված տույժի դրույքաչափն օրական 0.15 տոկոս սահմանելու և տույժերի հաշվարկը 365 օրով սահմանափակելու առաջարկը համարում ենք ընդունելի՝ նպատակ ունենալով պետական տուրքի գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տույժերի հաշվարկման համակարգը համապատասխանեցնել հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում տույժերի հաշվարկման համակարգի հետ:

2. Պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց նկատմամբ տույժերի հաշվարկման դրույքաչափի ու ժամանակահատվածի վերաբերյալ նախագծով ներկայացված առաջարկության ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հետևյալ նկատառումներով՝

1) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին պարբերությունը սահմանում է պատասխանատվություն պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց համար՝ իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում պետական տուրքի գումարները բյուջե չգանձելու համար: Այս առումով, գտնում ենք, որ մինչև պետական տուրքի գանձման օբյեկտ համարվող ծառայության մատուցումը կամ գործողության կատարումը պետական տուրք գանձող մարմինների կողմից պետական տուրքի գանձման (դրա վճարման ապահովման) տեսանկյունից անհրաժեշտ է պատասխանատվության ավելի խիստ միջոցի կիրառում, քան հարկերի պարագայում սահմանված պատասխանատվության միջոցներն են.

2) առաջարկության ընդունումը ռիսկային է նաև այն առումով, որ պետական տուրքի գծով հաշվարկվող տույժերի դրույքաչափը իջեցնելը և (կամ) տույժերի հաշվարկը 365 օրով սահմանափակելը կարող է նվազեցնել պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կարգապահության մակարդակը:

3. Նախագծում մասամբ պահպանված չեն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հարկային պարտավորությունների նկատմամբ սահմանված տույժերի չափը 1998 թվականի դեկտեմբերի 28-ին նվազեցվել է մինչև 0.2 տոկոս, իսկ 2010 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ընդհուպ մինչև 0.15 տոկոս, իսկ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով տույժերի դրույքաչափը գործում է

2000 թվականի դեկտեմբերի 30-ից և օրենսդրության կատարելագործման առումով 13 տարի չի փոփոխվել: «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով տույժերի ներկայիս դրույքաչափը գործում է 2001 թվականի հունվարի 1-ից (սահմանվել է 2000 թվականի դեկտեմբերի 26-ի «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-129 օրենքով), որը ևս շուրջ 13 տարի չի փոփոխվել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտները կնվազեն տարեկան մոտ 300 մլն դրամով:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Օրենքի նախագծի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փոփոխվում է պետական տուրքի գանձումն ուշացնելու համար նախատեսված տույժի դրույքաչափը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից պետական տուրքի գանձումն ուշացնելու համար նախատեսված տույժի դրույքաչափի փոփոխմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

Եզրակացություն

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով պետական տուրք գանձող մարմինների և տարեկան պետական տուրք վճարողների համար պետական տուրքը սահմանված ժամկետներում չգանձելու և սահմանված ժամկետներում չվճարելու համար նախատեսված տույժի դրույքաչափը՝ օրական 0.5 տոկոսի չափով, նվազեցնել և սահմանել օրական 0.15 տոկոսի չափով: Զուգահեռաբար, նախագծով առաջարկվում է տույժերի հաշվարկը սահմանափակել 365 օրով:

Ելնելով վերոշարադրյալից՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն:

Հայտնում ենք նաև, որ նախագծի ընդունումը ՀՀ պետական և համայնքների բյուջեների ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխության չի հանգեցնի:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-398-26.11.2013-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 35-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետեւանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են նրանցից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.15 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ, ինչը կիրառվում է ժամանակին չմուծված պետական տուրքի նկատմամբ դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:».

2) երրորդ պարբերությունում «0.5 տոկոսի» բառերը փոխարինել «0.15 տոկոսի» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից եւ տարածվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո հաշվեգրված տույժի գումարների նկատմամբ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության դրույքաչափի վերաբերյալ կարգը գործում է դեռեւս 2000 թվականի դեկտեմբերի 30-ից: Անհրաժեշտ է նշել, որ անցած տասներեք տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկային եւ մաքսային համակարգում, քաղաքականության մեջ տեղի են ունեցել լուրջ բարեփոխումներ, ներմուծվել է նոր, ժամանակակից գործիքակազմ, կատարելագործվել են օրենսդրությունը եւ վարչարարությունը: Հարկ է նշել, որ միեւնույն ժամանակ 1998 թվականից սկսած դրույքաչափի նվազեցումներ են կատարվել «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հարկային պարտավորության նկատմամբ հաշվարկվող տույժերի մասով, մասնավորապես՝ 1998 թվականի դեկտեմբերի 28-ին այն նվազեցվել է մինչեւ 0.2 տոկոս, իսկ 2010 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ընդհուպ մինչեւ 0.15 տոկոս: Նույն ժամանակաշրջանում պետական տուրքի նկատմամբ հաշվարկվող տույժի դրույքաչափը չի նվազեցվել 0.5 տոկոսից, իսկ տույժի, ըստ էության, առանց դադարելու եւ մայր գումարից ավել հաշվարկվելու մեխանիզմը որեւէ կերպ չի տեղավորվում թե գործարար շրջանակների, թե իրավակիրառ պրակտիկայի սկբունքների մեջ:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական տուրքն, ըստ բովանդակության, պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ ծառայությունների կամ գործողությունների համար բյուջե մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է, իսկ միեւնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով դրամական պարտավորությունները չկատարելու համար կիրառվում են Հայաստանի Հանրապետության ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, կարծում ենք, որ 0.5 տոկոսդրույքաչափն այս համատեքստում առավել քան անընդունելի է:
Սույն նախագծի ընդունումը թույլ կտա կիրառել արդարացի, միջազգային առաջավոր պրակտիկային համահունչ վարչարարություն՝ միեւնույն ժամանակ համահարթեցնելով տույժերի կիրառման մեխանիզմը հարկային ոլորտում իրականացվող քաղաքականության հետ: